Ուսումնական նախագծի թեմատիկ պլան

«Միջնադարյան Ֆրանսիան »

Առարկան՝ Համաշխարհային պատմություն

Դասարանը՝ 7- րդԱ

Տևողությունը՝ 6 շաբաթ

Սովորողներ՝

1.Միլենա Իսախանայան
2.Էլեն Անդրեասյան
3.Անի Մարգարյան
4.Էլեն Հակոբյան
5.Ավետ Խաչատրյան
6.Աննա Գալստյան
7.Գոռ Ավագյան
8.Ռազմիկ Մխիթարյան
9.Անգելինա Մկրտչյանը
10.Էլիզա Սուքիասյան
11.Սուրեն Մանուկյան
12.Դավիթ Բաքոյան
13.Մանե Ավագյան
14.Տաթևիկ Գևորգյան
15.Ալեն Անտոնյան
16.Էլենա Պողոսյան
17.Ալեքս Թադևոսյանը
18.Վահե Պողոսյան
19.Գոռ Հովհաննիսյան
20.Գեղամ Հովհաննիսյան

Նպատակը՝

Սովորողները կծանոթանան **միջնադարյան Ֆրանսիայի պատմությանը:**

Սովորողները կվերլուծեն միջնադարյան Ֆրանսիայի դեպքերն ու իրադարձությունները:

Սովորողները կզարգացնեն պատմական հաղորդակցման հմտությունները՝ ուսումնասիրելով միջնադարյան Ֆրանսիայի պատմությունը:

Նյութեր՝

1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ Միջնադարյան Ֆրանսիայի մասին:
2. Հարյուրամյան պատերազմի քարտեզը:
3. Միջնադարյան Ֆրանսիայի նկարներ և տեսանյութեր:
4. Սկզբնաղբյուրներ:
5. ՏՀՏ գործիքներ
6. Թուղթ, մկրատ, սոսինձ և մարկերներ:

Վերջնարդյունքը՝ Ստեղծել «Ժամանակի հետքերով » ուսուցողական խաղը, որի նպատակը կլինի զարգացնել սովորողների պատմական հաղորդակցման հմտությունները :

Ընթացակարգը՝

Շաբաթ 1:

1. Ծանոթացում Միջնադարյան Ֆրանսիային:

Սովորողները կդիտեն փաստագրական ֆիլմ «Հարյուրամյա պատերազմի» վերաբերյալ:

Ուսուցիչը հակիրճ պատմական ակնարկ կներկայացնի Միջնադարյան Ֆրանսիայի պատմության, մշակույթի վերաբերյալ, կբացատրի միջնադարի դերը հայ և համաշխարհային պատմության մեջ :

Շաբաթ 2:

2. Այցելություն թանգարաններ, հանդիպում թեմայի մասնագետների, բանախոսների հետ:

1.Սովորողները կայցելեն Հայաստանի ազգային պատկերասրահ կամ կլսեն հրավիրյալ բանախոսից, ով լրացուցիչ տեղեկություններ կհաղորդի ֆրանսիացիների մշակութային առանձնահատկությունների մասին:

2.Այնուհետև կհստակեցնեն անելիքները և կպատրաստվեն թեմայի ուսումնասիրմանը և վերջնարդյունքի ստեղծմանը:

Շաբաթ 3:

3. Կազմակերպչական հարցեր.

Ստեղծել աշխատանքային 4 խումբ՝ բաղկացած 5 հոգուց: Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :

Առաջին խումբը՝ հետազոտողներ,ովքեր պատմական տարբեր աղբյուրներից օգտվելով տեղեկություններ կհավաքեն Միջնադարյան Ֆրանսիայի վերաբերյալ:

Երկրորդ խումբը ՝ ուսումնասիրողներ,ովքեր պետք է -ուսումնասիրեն և վերլուծեն միջնադարյան Ֆրանսիայի դեպքերն ու իրադարձությունները:
Երրորդ խումբը կզբաղվի կազմակերպչական հարցերով /ինչպես ստեղծել խաղը,ինչ նյութեր օգտագործել և այլն:
Չորրորդ խումբը կզբաղվի դիզայնով և համակարգչով նյութերի հավաքմամբ:

Շաբաթ 4:

4. Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:

Կազմել «Ժամանակի հետքերով» խաղի կանոնները, ստեղծել ուղեցույց և կազմել հարցաշար:

Շաբաթ 5:

Ստեղծել «Ժամանակի հետքերով» ուսուցողական խաղը, օգտագործել ՏՀՏ գործիքներ խաղը պատրաստելու և տպագրելու համար:

Շաբաթ 6:

8. Նախագծի ներկայացում.

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը և կգնահատվեն: